Arestakes Simavoryan

To cite this version:

Arestakes Simavoryan. . 2019. hal-03317988

HAL Id: hal-03317988
https://hal.science/hal-03317988

Submitted on 9 Aug 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Public Domain

Թուրքիայի փորձագիտական կենտրոնների որոշ հարցերի շուրջ

Author: Arestakes Simavoryan

ORCID iD: 0000-0002-7519-5127

Published online: February 12, 2019

Publisher: Orbeli Center

Source: <https://orbeli.am/hy/post/133/2019-02-01/Թուրքիայի+փորձագիտական+կենտրոնների+որոշ+հարցերի+շուրջ>

Փորձագիտական-վերլուծական կառույցների զարգացումը ու նշանակությունը Թուրքիայի հանրային, քաղաքական կյանքում, մասնավորապես՝ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում, տնտեսությանն ու անվտանգությանն առնչվող հարցերում, համընկան տարածաշրջանային և աշխարհառազմավարական կարևորագույն շրջադարձերի հետ, որոնք նոր մարտահրավերներ և հնարավորություններ ստեղծեցին այդ երկրի համար:

Արդյունքում՝ հասարակության տարբեր շերտերն ու պետական-քաղաքական շրջանակները սկսում են շոշափել անվտանգության, արտաքին քաղաքականության, կրթության, առողջապահության և այլ հարցեր, որոնք դարձան նաև փորձագիտական-հետազոտական կենտրոնների ուսումնասիրության հիմնական առանցքը: Պատահական չէ, որ միջազգային հարաբերություններում մասնագիտացած կառույցներն այժմ քանակապես գերազանցում են այլ ոլորտներն ուսումնասիրող կենտրոններին: Սակայն, քանի որ դրանք քաղաքական տարբեր հոսանքներին հարող հետազոտական կենտրոններ են, արտահայտում են այլընտրանքային քաղաքականության ձևավորման սեփական պատկերացումներն ու տեսլականը:

Չնայած առաջին «**ուղեղային կենտրոնները**» Թուրքիայում ի հայտ են եկել անցյալ դարի 60-ական թվականներին, այդուհանդերձ, ոլորտը բուռն վերելք ապրեց «**Արդարություն և զարգացում**» կուսակցության իշխանության տարիներին: Հատկապես վերջին տասնամյակում Թուրքիայում հիմնադրվել է մոտ 80 հետազոտական կազմակերպություն, իսկ ընդհանուր թիվ գերազանցում է 200-ը: Դրանց ճնշող մեծամասնությունը գործում է մասնավոր հատվածում, մի մասը՝ բուհական-ակադեմիական, պետական կառույցներին և փոքր մասը՝ կուսակցություններին կից: Չմանրամասնելով Թուրքիայի ուղեղային կենտրոնների տիպաբանական և զարգացման

առանձնահատկությունները՝ ներկայացնենք գիտավերլուծական այն կազմակերպությունները, որոնց մտավոր «**արտադրանքը**» և գործելակերպը իշխող «**Արդարություն և զարգացում**» կուսակցությանն աջակցելն է:

Ռազմավարական մտածողության ինստիտուտ (Stratejik Düşünce Enstitüsü-SDE-www.sde.org.tr): Հիմնադրվել է 2009թ. Անկարայում: Քվազի պետական [1] պահպանողական ուղղվածության կենտրոն է: 2010-2014թթ. ինստիտուտի պատվավոր նախագահը «**Արդարություն և զարգացում**» կուսակցության արտաքին հարաբերությունների գծով նախկին ղեկավար Յասին Աքթայն էր: Ինստիտուտն իրեն համարում է «**Նոր Թուրքիայի**» մտածողության կենտրոն, որտեղ մշակվում են ներքին ու արտաքին քաղաքականության, մեդիայի, ֆինանսատնտեսական, պաշտպանության և անվտանգության ոլորտների այլընտրանքային ռազմավարություններ: Ինստիտուտի շրջանակներում գործում է նաև ակադեմիա (SDE Akademi), որը կրթական գործառույթների հիմնական շեշտը դնում է վերլուծական նոր հանրության ձևավորման վրա: Կրթական ծրագրերը համընկնում են ինստիտուտի հետազոտական ուղղությունների հետ և նախատեսված են միայն ուսանողների համար:

Քաղաքական, տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամ (Siyaset, Ekonomi ve Toplum Araştırmalar Vakfı-SETA- www.setav.org): Ստեղծվել է 2006թ. Քաղաքական հետազոտությունների Անկարայի կենտրոնի հիման վրա՝ Թուրքիայի նախագահ Էրդողանի մամուլի խոսնակ Իբրահիմ Քալընի կողմից: Կենտրոնական գրասենյակը Անկարայում է, մասնաճյուղեր ունի Վաշինգտոնում (SETADC www.setadc.org) և Բեռլինում: Պահպանողական ուղղվածության, քվազի պետական ուղեղային կենտրոն է: Պետական մարմիններին առաջարկություններ տրամադրելու նպատակով հետազոտում է քաղաքական, տնտեսական և սոցիալական հարցերը: Վերջին տարիներին կենտրոնի հետազոտությունների առանցքում են մեդիաոլորտը, գիտակրթական, մարդու իրավունքների, թուրքական սփյուռքի, անվտանգության, պաշտպանության և տեխնոլոգիաների հարցերը:

Թուրք-ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոն (Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi-TASAM-www.tasam.org): Հիմնադրվել է 2003թ. Ստամբուլում,

---

[1]Քվազի պետական կամ քվազի կառավարական են համարվում ուղեղային այն կենտրոնները, որոնք պաշտոնապես ընդգրկված չեն կառավարության կառուցվածքում, բայց ֆինանսավորվում են բացառապես պետական դրամաշնորհներից[1]:

միջազգայնագետ Սուլեյման Շենսոյի նախաձեռնությամբ, ունի մասնաճյուղ Անկարայում: Քվազի պետական, չափավոր ազգայնական, պանթյուրքիստական շեշտադրումներ ունեցող կենտրոն է: Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերում կենտրոնն ուղղորդվում և մտավոր, կազմակերպչական աջակցություն է ստանում Թուրքիայի ԱԳՆ-ից, գերատեսչական այլ կառույցներից:

Թուրքիայի նախագահականի հովանավորությամբ և աջակցությամբ իրագործում է «**Թուրքիայի տեսլականը 2023**» և «**Թուրքիա 2053**» նախագծերը: Ըստ էության դրանք ապագային միտված նախագծեր են՝ ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների համար, որոնք իրագործվում են «**Գիտակ երկիր – գլոբալ դերակատար**» կարգախոսի ներքո:

Առաջին նախագծով խնդիր է դրված մասնագիտական լայն շրջանակների ներգրավմամբ գնահատել համակարգային ռիսկերը, զարգացման հնարավոր սցենարները, իրականացնել մակրոկանխատեսումներ գյուղատնտեսության, ներառյալ՝ նրա ենթաճյուղերի վերաբերյալ [2]: Երկրորդ նախագիծը վերաբերում է Թուրքիայի միջազգային հարաբերություններին, տնտեսությանը, միջուկային էներգետիկային և միջուկային տեխնոլոգիաներին, լոգիստիկ և տրանսպորտային հիմնահարցերին, սոցիալական անվտանգությանը, ռազմարդյունաբերությանն ու ընդհանրապես կարևորագույն նշանակություն ունեցող ենթակառուցվածքներին [3]: Ավելորդ չէ նշել, որ այս աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ոլորտների պատասխանատու պետական հաստատությունները:

Կենտրոնի ուշադրության կիզակետում են նաև Թուրքիայի արտաքին հարաբերությունները: Կազմակերպվում են ամենամյա ֆորումներ (Թուրքիա-Եվրոպա, Թուրքիա-Լատինական Ամերիկա և Կարիբյան երկրներ, Թուրքիա-ԱՄՆ, Թուրքիա-Չինաստան, Թուրքիա-Իրան և այլն) միջազգային փորձագետների և տարբեր երկրների քաղաքական գործիչների մասնակցությամբ՝ «**Ռազմավարական երկխոսություն**» ծրագրի շրջանակներում [4]:

Գիտավերլուծական հետազոտություններ են իրականացվում նաև թյուրքախոս երկրների սփյուռքն ինտեգրելու և տարբեր մակարդակներում նրանց միջև համագործակցության հնարավորությունները գնահատելու ուղղությամբ: Կարելի է

ասել, որ թյուրքական աշխարհի միջև համագործակցության գաղափարներ և ռազմավարություն մշակող եզակի հաստատություններից է [5]։

Ուղեղային կենտրոնների կենսագործունեության համար կարևոր է կայուն ֆինանսավորումը, որը ձևավորվում է տարբեր աղբյուրներից։ Ինչպես նշեցինք, քվազի պետական կամ քվազի կառավարական բնորոշումը ստացած ուղեղային կենտրոնները սերտ հարաբերություններ ունեն պետական համակարգի հետ, սակայն, պաշտոնապես ընդգրկված չեն կառավարության կառուցվածքում և ֆինանսավորվում են բացառապես պետական դրամաշնորհներից։

Վերը հիշատակված երեք կենտրոնների ֆինանսավորման աղբյուրները թափանցիկ չեն, սակայն հայտնի է, որ իշխանությանը մոտ կանգնած կամ նրանց քաղաքական հայացքները կիսող փորձագիտական կենտրոնները մասնակիորեն գումար են ստանում պետական դրամշնորհների և նվիրատվությունների տեսքով։ Օրինակ՝ Ռազմավարական մտածողության ինստիտուտի ֆինանսների 75%-ը գոյանում է պետական նախագծերից, մնացածը՝ հոգաբարձուների նվիրատվություններից [6]։

Քաղաքական, տնտեսական, հասարակական հետազոտությունների հիմնադրամը, բացի պետական դրամաշնորհներից, ֆինանսավորվում է նաև այլ աղբյուրներից, հատկապես՝ անհատ ձեռներեցների կողմից, որոնք պաշտպանում և աջակցում են ԱԶԿ-ի տնտեսական քաղաքականությունը։ Համաձայն SETA-ի Վաշինգտոնի գրասենյակի նախկին ղեկավար Նուհ Յըլմազի՝ նրանց ֆինասավորում են գործարարներ, որոնք առևտրատնտեսական հարաբերությունների մեջ են Բալկանների և Մերձավոր Արևելքի մի շարք պետությունների հետ [7]։

Թուրք-ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնը ֆինանսական աջակցություն է ստանում բանկային սեկտորից, պետական կառավարման այն մարմիններից, որոնց հետ համատեղ իրականացնում է միջոցառումներ և հետազոտական նախագծեր, տեղական գիտակրթական հաստատություններից, արդյունաբերական և այլ կազմակերպություններից։ Հաճախ ֆինանսական աղբյուրները (պետական և ոչ պետական) համադրվում են։ Չնայած երեք կենտրոններն էլ Թուրքիայի սահմաններից դուրս գործող առաջատար հետազոտական հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելու փորձ ունեն, սակայն

դեմ են նրանց ֆինանսավորմանը, ինչը կարող է սահմանափակել անկախությունն ու «**ակադեմիական**» ազատությունը:

Ստորև բերված աղյուսակը (տե՛ս աղյուսակ 1) ցույց է տալիս նրանց գիտագործնական միջոցառումների տեսակները, հետազոտական արդյունքների տարածման հիմնական միջոցները՝ մասնագիտական գրականություն, ամսագրեր, թեմատիկ պարբերականներ, հետազոտական գրքեր, զեկույցներ, վերլուծական ամփոփագրեր և այլն:

Աղյուսակ 1

	Հետազ	Հրատարակություններ և այլն				Գիտագործնական միջոցառումներ		Ներկայացվածությունն ու ակտիվությունը սոցցանցերում		
	Ուղղ.	Կայքի առկայություն	Գրախոս. ամսագիր	Այլ հրատ.	Մամուլ/ TV հմգ.	Սեմինար, պանել և այլն	Միջազգային և տեղական կոնֆերանս	facebook	twitter	youtube
TASAM	9	+	+	+	+	+	+	+	+	*
SETA	10	+	+	+	+	+	+	+	+	+
SDE	5	+	+	-	+	*	+	+	+	+
+ : Կա - : Չկա * : Սահմանափակ										

Կենտրոնները տարբեր բնագավառներում իրականացնում են կանխատեսումներ, պետական տարբեր օղակներին տրամադրում խորհրդատվություն, մասնակցում ռազմավարական հայեցակարգերի ու օրենքների մշակմանը: Նշենք, որ սերտորեն կապված լինելով ԱԶԿ-ի և պետական կառավարական տարբեր մարմինների հետ, կենտրոնները ունեն նաև «**փակ**» մաս: Այլ հարց է, թե որքանով են դրանք ազդում որոշումների կայացման վրա:

Հետևելով Թուրքիայի արտաքին քաղաքականության վեկտորներին և առաջնահերթություններին՝ կենտրոնները համագործակցում են Բալկանների, Կենտրոնական Ասիայի, Մերձավոր Արևելքի երկրների ուղեղային կենտրոնների հետ: SETA-ն և SDE-ն ներգրավված են կառավարության ծրագրով իրականացվող «**Ուղեղային կենտրոնների համագործակցություն**» նախագծում, որն իրականացվում է թուրքական սփյուռքի գործունեությունը համակարգող պետական մարմնի՝ Արտասահմանի թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչության կողմից [8]: TASAM-ը ևս այս ուղղությամբ իրականացնում է որոշակի քայլեր Թուրքիայի ԱԳՆ-ի օժանդակությամբ:

Մի քանի տարի շարունակ Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ երկրների փորձագիտական շրջանակների հետ կազմակերպում է ֆորումներ՝ նվիրված հանրային դիվանագիտության հնարավորություններին, սոցիալ-տնտեսական հարաբերություններին, անվտանգության հարցերին, իսլամական աշխարհի մարտահրավերներին և այլն [9]:

Այսպիսով, չլինելով որևէ կուսակցության կամ գերատեսչական կառույցին կից կենտրոններ, բայց ներգրավված լինելով արտաքին քաղաքականության մշակման գործընթացներում՝ հիշյալ ուղեղային կենտրոնները փորձագիտական-հետազոտական աշխատանքների միջոցով գործնականում իրականացնում են շահապաշտպան գործունեություն: Միևնույն ժամանակ, այս նոր հնարավորություններն օգտագործվում են պետական կառավարման մարմիններում իրենց կադրերի համար պաշտոններ ապահովելու նպատակով:

REFERENCES

1. Atoyan, V. (2017). Ուղեղային կենտրոնների տիպաբանության հարցերը քաղաքագիտական դիսկուրսում (Typology Issues of Think Tanks in the Discourse of Political Sciences). *21st Century*.
2. http://www.tasam.org/tr-TR/Spektrum/97
3. http://www.tasam.org/tr-TR/Spektrum/71
4. http://www.tasam.org/tr-TR/Spektrum/86
5. Simavoryan, A. (2018). Թուրքիան և թյուրքալեզու երկրների սփյուռքերի համագործակցությունը. *GLOBUS ANALYTICAL BULLETIN, Noravank Foundation*, *92 (3),* 10-17.
6. Umur Bedir, Policy Experts as Fast-thinker: Relationship between Media and Turkish Conservative Think Tanks, https://www.atiner.gr/presentations/MED2016-0003.pdf
7. Düşlüyor, düşünüyor ve karar aldırıyorlar, http://www.hurriyet.com.tr/gundem/dusluyor-dusunuyor-ve-karar-aldiriyorlar-17844234
8. https://www.ytb.gov.tr/haberler/ortadogu-turkiyede-bulustu-22-ulkeden-33-temsilci-turkiyede
9. http://www.tasam.org/tr-TR/Etkinlik/613/6_islam_ulkeleri_dusunce_kuruluslari_forumu